

LIFE – «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» ծրագրի

ՏԵՂԵԿԱԳԻՐ
#11- հոկտեմբեր 2014



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



Save the Children

LIFE ծրագիրը (2012-2015) իրականացնում է «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

Ծրագրի գործընկերներն են «Ակտիվա» միջազգային հիմնադրամը, «Ունիսոն», «Էյջ-Դի-Փի հիմնադրամ» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ները:

Ծրագիրը սերտորեն համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Զբաղվածության պետական գործակալության և զբաղվածության կենտրոնների, հաշմանդամություն ունեցող անձանց և ՀԿ-ների, մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, ծառայություններ մատուցողների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների հետ:

ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ
LIFE ԾՐԱԳՐԻ ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ

- «ԼԱՅՖ» ՄՐՃԱՐԱՆ (ք. Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ)
- «ԷԿՈՏԵԽՆՈ» (ք. Երևան)
- «ԳՈՒՄ» ՄՊԸ (ք. Գորիս, Սյունիքի մարզ)
- «ԼԵՆՏԵՔՄ» ՄՊԸ (ք. Գյումրի, Շիրակի մարզ)
- «ԻՂԶ» ՄՊԸ (ք. Մարտունի, Գեղարքունիքի մարզ)
- «ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՆԱՆԱ» ՄՊԸ (ք. Սևան, Գեղարքունիքի մարզ)
- ՀՐԱՆՈՒՇ ՄԱՐԳՍՅԱՆ» Ա/Զ (ք. Կապան, Սյունիքի մարզ)
- ԵՐԵՎԱՆԻ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵԶ (ք. Երևան)
- «ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊՐԻՆՏ» ՄՊԸ (ք. Երևան)
- «ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ» Ա/Զ (ք. Արտաշատ, Արարատի մարզ)
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ք. Աշտարակ, Արագածոտնի մարզ)
- «ԻՆՍԹԻԳԵՅԹ ՄՈԲԱՅԼ» ՄՊԸ (ք. Երևան)
- ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (ք. Երևան)



2013թ. LIFE ծրագրի շրջանակներում մեկնարկեց փոքր դրամաշնորհների ծրագիրը, որն ուղղված էր Հայաստանում հասարակական կազմակերպությունների և գործարար համայնքի համագործակցության խթանմանը՝ ի նպաստ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման:

2013թ. դեկտեմբերից մինչև 2014թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում LIFE ծրագիրը փոքր դրամաշնորհներ է տրամադրել 11 ՀԿ-ների և 2 բիզնես կառույցների՝ սոցիալական ձեռնարկություններ հիմնելու կամ դրանց գործունեությունն ընդլայնելու և այնտեղ հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավելու նպատակով: Փոքր դրամաշնորհային ծրագրերը իրականացվում են Երևանում և Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում:

Փոքր դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ավելի քան 130 ՀՈՒԱ զարգացրել են իրենց կարողությունները, անցել վերապատրաստում և ապահովվել երկարաժամկետ աշխատանքով:

Ստորև ներկայացված են LIFE ծրագրի շրջանակներում հիմնված սոցիալական ձեռնարկությունների համառոտ նկարագրությունը:

LIFE ծրագրի մասին մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել այցելելով www.life-disability.am վեբ կայք:

«ԼԱՅՖ» ՄՐՃԱՐԱՆ (ք. Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ)

LIFE ծրագրի կողմից տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակում Գեղարքունիք մարզի Ճամբարակ քաղաքում ստեղծվել է առաջին սրճարանը, որն աշխատանքով է ապահովել համայնքի յոթ բնակիչների: Սրճարանը ստեղծվել է «ՊՐԻՄ» համայնքային զարգացման հիմնադրամի ու «Աստղացույք» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ-ի համատեղ ջանքերով:

«ԼԱՅՖ» անունը կրող սրճարանը փոխել է հաշմանդամություն ունեցող հինգ անձանց կյանքի որակն ու մտածելակերպը:

«Առաջ ես մտածում էի, որ պետք է փոխեմ հասարակության վերաբերմունքն իմ նկատմամբ, սակայն հետո հասկացա, որ պետք է փոխվեմ ինքս, եթե ուզում եմ, որ ինձ ընդունեն որպես հավասարի», - ասում է սրճարանի մենեջերը՝ Մերին, որի համար սրճարանն առաջին աշխատանքային վայրն է:

Բացի աշխատատեղեր ստեղծելուց, սրճարանը նաև գույներով է լցրել համայնքի, մասնավորապես երեխաների առօրյան: Հանդիպումներ տաք թեյի գավաթի շուրջ, ֆիլմերի դիտումներ մեծ էկրանի վրա և ծննդյան ուրախ տոնախմբություններ... Ահա թե ինչպես է անցնում սրճարանի առօրյան:

Սրճարանի յոթ աշխատակիցները համակարծիք են, որ սրճարանի հաջողությունը կախված է ծառայությունների որակից, ինչը ցանկացած բիզնեսի հաջողության գրավականն է, և ձգտում են անել ավելին, որպեսզի հաճախորդների թիվն ավելանա:



«ԷԿՈՏԵԽՆՈ» (ք. Երևան)



«ԷԿՈՏԵԽՆՈ» վերականգնվող էներգետիկայի հիմնահարցերով զբաղվող ձեռնարկությունը ստեղծվել է 2014թ. «Լեռնային ծաղիկներ» ԲՀԿ-ի և «Դանտես կոմպ» ՍՊԸ-ի կողմից՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող տասն անձանց զբաղվածությունը:

Նորաստեղծ ընկերությունը նպատակ ունի խթանել արեգակնային էներգիայի օգտագործումը՝ հաշվի առնելով երկրի բնապահպանական և սոցիալ-տնտեսական խնդիրները:

«LIFE» ծրագրի աջակցությամբ ընկերությունը համալրվել է արեգակնային էներգիայով ջրատաքացուցիչների և ջեռուցման համակարգերի արտադրության համար անհրաժեշտ սարքավորումներով, որոնք հնարավորություն են տալիս արտադրել նաև ապակեպլաստե դռներ և պատուհաններ:

Արեգակնային էներգիան արևային լույսի փոխարկումն է էլեկտրականության: Ընկերության կողմից կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ նվազագույն ծախս / առավելագույն եկամուտ հարաբերության դեպքում արևային էներգակիրների օգտագործումը յուրաքանչյուր ընտանիքի համար կարող է խնայել 30-80 տոկոս էլեկրաէներգիայի կամ գազի օգտագործում:

Այսօր Հայաստանում վերականգնվող էներգիայի մշակույթն արդեն զարգացման փուլում է, և այս առումով «ԷԿՈՏԵԽՆՈ» ընկերությունն առաջիններից է, ով հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի ստեղծման միջոցով փորձում է խթանել ոլորտի զարգացումը՝ նպաստելով ընտանիքների սոցիալ-տնտեսական և երկրի բնապահպանական խնդիրների վարելավմանը:

«ԳՈՒՄ» ՄՊԸ

(ք. Գորիս, Մյունիքի մարզ)

«Ես կարող եմ» ծրագրի շրջանակներում «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի հետ համատեղ «ԳՈՒՄ» ՄՊԸ-ն հիմնել է պայուսակների և գոտիների, կաշվե և կտորե իրերի արտադրություն:

Կատարված հարցումների և շուկայական վերլուծության արդյունքում ընկերությունը պարզել է, որ պայուսակների և գոտիների տեղական արտադրությունը բավականին փոքր ծավալների է, ուստի ընկերությունը ներկայումս ունի լայն հնարավորություններ սպառում իրականացնելու ինչպես տեղական, այնպես էլ այլ երկրների շուկաներում:



Ընկերությունն իրականացնում է արտադրության բոլոր հաջորդականությունները. դիզայն /ձևավորում, ձևում, կար, որակի ստուգում, փաթեթավորում, հաշվառում / պահեստավորում, առաքում, վաճառք:

12 աշխատակիցներից տասը հաշմանդամություն ունեցող անձինք են, որոնք ընտրվել են ծրագրի շրջանակներում իրականացված այցելությունների, հարցազրույցների ու անցկացված դասընթացների արդյունքների հիման վրա: Նրանք հիմնականում ունեն ստեղծագործելու, դիզայնի, կարելու հմտություններ: Աշխատակիցները մեծապես

հետաքրքրված են կարի արտադրամասի գործունեությամբ և կարող են նպաստել զարգացման հեռանկարին:

Այժմ ավարտին են մոտենում շինարարական աշխատանքները, որի արդյունքում կաշվե իրերի կարի արտադրամասի գործարկման համար կստեղծվեն բոլոր հարմարավետ պայմանները:

«ԼԵՆՏԵՔՍ» ՍՊԸ (ք. Գյումրի, Շիրակի մարզ)

«Հույս, կյանք, հավատ, ապագա» երիտասարդական ՀԿ-ի «ԼԵՆՏԵՔՍ» ՍՊԸ-ի համագործակցության արդյունքում ապահովել է աշխատանքով 11 հաշմանդամություն ունեցող անձ:

«ԼԵՆՏԵՔՍ» ՍՊԸ-ն գույլեղենի և տրիկոտաժի արտադրության մասնագիտացված ձեռնարկություն է, որը տարիների ընթացքում նվաճելով տեղական և արտասահմանյան շուկաները՝ թողարկում է տարվա չորս եղանակների համար, չափահասակային ամբողջ սանդղակով արտադրանք:

«LIFE» ծրագրի շրջանակներում «Լենտեքս» ընկերությունը կազմակերպել է վերապատրաստումներ հաշմանդամություն ունեցող 18 անձանց համար, այնուհետև 11 ընդունել է աշխատանքի:

Աշխատանքի ընդունված հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում կատարված հարցման արդյունքում պարզվել է, որ ծրագիրը մեծ ազդեցություն է ունեցել շահառուների համար՝ բարձրացնելով նրանց ինքնագնահատականը և նպաստելով անկախ ապրելու ձգտմանը:



«ԻՂԶ» ՍՊԸ (ք. Մարտունի, Գեղարքունիքի մարզ)

«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն 2014թ. հուլիսի 23-ին պաշտոնապես ազդարարեց «Իղձ» սոցիալական ձեռնարկության մեկնարկը: Ձեռնարկությունը բաժանված է արտադրական երկու ուղղությունների՝ կարի արտադրություն և գունավոր տպագրություն:

Սա մարզի առայժմ միակ ծառայությունն է, որն իրականացնում է լազերային տպագրություն: Տպագրական աշխատանքներ կազմակերպելու նպատակով ընկերությունը ձեռք է

բերել տպագրական սարքավորումներ, որոնց շնորհիվ թողարկվում են պաստառներ, գովազդային վահանակներ, բուկլետներ, այցեքարտեր, ընտանեկան օրացույցեր, հրավիրատոմսեր և այլն, իսկ կարի արտադրամասը համալրվել է բարձրորակ մասնագիտական կարի մեքենաներով, որոնք հնարավորություն են տալիս կարճ ժամկետներում կատարել սպիտակեղենի, հագուստի, տրիկոտաժի, արտահագուստի և այլ որակյալ ապրանքների պատվերներ:

Երկու արտադրամասերում աշխատում են հաշմանդամություն ունեցող տասն անձինք:



«ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՆԱՆԱ» ՄՊԸ (ք. Սևան, Գեղարքունիքի մարզ)

«ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՆԱՆԱ» սոցիալական ձեռնարկությունը հիմնվել է «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից:

Ձեռնարկության նպատակը բարձրորակ հրուշակեղենի արտադրությունում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովումն է:

Արտադրամասը թողարկում է միայն էկոլոգիապես մաքուր և անվտանգ սննդամթերք և չի օգտագործում կոնսերվանտներ, խմորիչներ ու փխրեցուցիչներ:

Ընկերության հիմնմանը զուգընթաց արտադրամասերում մասնագիտական վերապատրաստում են անցել և ներկայումս իրենց զբաղվածությունն են գտել հաշմանդամություն ունեցող տասնմեկ անձինք:



«ՀՐԱՆՈՒՇ ՍԱՐԳՍՅԱՆ» Ա/Ձ (ք. Կապան, Սյունիքի մարզ)

«ՀՐԱՆՈՒՇ ՍԱՐԳՍՅԱՆ» Ա/Ձ-ն հիմնվել է 2010թ.: Այն հիմնականում արտադրում է անկողնային պարագաներ, բանվորական արտահագուստ և մանկական տրիկոտաժ, սակայն ընդունվում են նաև պատվերներ ինչպես տարածաշրջանի այլ ընկերություններից, այնպես էլ անհատներից:



Ներկայումս ձեռնարկությունում աշխատում են հաշմանդամություն ունեցող տասն անձինք, ովքեր իրենց գնահատված և արժևորված են զգում ինչպես գործընկերների, այնպես էլ այցելուների և պատվիրատուների կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՁ

(ք. Երևան)



LIFE ծրագրի շրջանակներում Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը հիմնել է սոցիալական ձեռնարկություն, որտեղ աշխատակիցների 70%-ը հաշմանդամություն ունեցող անձինք են:

2014 թ. ապրիլ-հունիս ամիսներին ուսումնական հաստատությունում իրականացվել են համակարգչային գրաֆիկայի և գործավարության մասնագիտություններով խորացված ուսուցումներ հաշմանդամություն

ունեցող 12 շահառուների համար և լավագույն արդյունքներ դրսևորած վեց անձինք աշխատանքի են տեղավորվել նորաստեղծ ընկերությունում:

Ձեռնարկության արտադրանքն իրենից ներկայացնում է տարբեր բնույթի գրաֆիկական պատկերներ, որոնք տպագրվում են կերամիկական սալիկների, օրգանական ապակու, փայտի, ապակու, շապիկների, վերնաշապիկների, հեռախոսների և տարբեր նյութերից բաղկացած հարթ մակերևույթների վրա: Արտադրանքը կարելի է օգտագործել բնակարանների ներքին և արտաքին հարդարման և անձնական էստեթիկական նպատակների համար: Սալիկներն ունեն ցածր ինքնարժեք, բարձր որակ և չեն պահանջում կրկնակի թրծում, որը և մեծ առավելություն ունի նախորդ տեխնոլոգիաներով ստացված արտադրանքի նկատմամբ:

«ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊՐԻՆՏ» ՄՊԸ

(ք. Երևան)

«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ-ի ջանքերով «ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊՐԻՆՏ» ՄՊԸ-ի հետ համատեղ նախաձեռնվել է տպագրական արտադրություն, որտեղ ուսուցանվել և աշխատանքի է տեղավորվել հաշմանդամություն ունեցող 12 անձ: «ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊՐԻՆՏ» տպագրատանը արտադրվում են էկոլոգիապես մաքուր փաթեթավորման թղթեր, տուփեր, տարբեր արտադրատեսակների համար անհրաժեշտ թղթից պատրաստված կափարիչներ և այլն:

Այստեղ հաշմանդամություն ունեցող անձինք ձեռք են բերել և կատարելագործել տպագրական աշխատանքի համար անհրաժեշտ հմտությունները ձևավորման, գրաֆիկայի, մարկետինգի, մինչտպագրական և հետտպագրական արտադրական ոլորտներում:



Ներկայումս նաև «Փյունիկ» ՀԿ-ի շենքում երկու սենյակ է վերանորոգվում՝ անձեռոցիկների արտադրություն կազմակերպելու նպատակով: Հեռանկարում նախատեսվում է իրականացնել անվասայլակների, քայլակների, հենակների և այլ պարագաների վերանորոգման աշխատանքներ:

«ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ» Ա/Չ (ք. Արտաշատ, Արարատի մարզ)



Ընկերությունն ունի ավելի քան տասը տարվա վաղեմություն և իրականացնում է պլաստիկ թափոնների հավաքում, տեսակավորում, վերամշակում և դրանցից լայն սպառման արտադրատեսականու ստացում:

Նպատակ դնելով առկա բիզնեսի ընդլայնումը՝ ընկերությունն ստեղծել է նոր ինտեգրված աշխատանքային միջավայր և նորաստեղծ աշխատատեղերում ընդգրկել հաշմանդամություն ունեցող անձանց:

Ներկայումս ընդլայնվում է պլաստիկ շշերի կապսուլաների, գյուղատնտեսական նշանակության լայն թաղանթների, տոպրակների և աղբի համար պոլիէթիլենային պարկերի արտադրությունը:

Արտադրամասում աշխատանքի են տեղավորվել հաշմանդամություն ունեցող 11 անձինք, ովքեր համապատասխան հաստոցների օգնությամբ իրականացնում են երկրորդային հումքի տեսակավորում, լվացում, աղում,

գրանուլացում:

Սպառման շուկան ներառում է Արարատի մարզը և Երևան քաղաքում գործող մանրամեծաձախ խանութները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ք. Աշտարակ, Արագածոտնի մարզ)


«Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպության նպատակն է նպաստել տեսողության խնդիրներ ունեցող հաշմանդամների համախմբմանը, բարեկեցության ապահովմանն ու սոցիալական ընտեգրմանը:

Հաշվի առնելով «Աշտարակի ՈՒԱՉ» էլեկտրական եղանիկների արտադրական հնարավորությունները և գնահատելով Հայաստանի շուկայի պահանջարկը՝ ծրագրի շրջանակներում ընկերությունը համարվել է արտադրության համար անհրաժեշտ հումքով՝ աշխատանքի հնարավորություն ընձեռելով տեսողության խնդիրներ ունեցող ավելի քան տասն անձանց:



«ԻՆՍՏԻԳԵՅԹ ՄՈՒՄԱՅԼ» ՄՊԸ

(ք. Երևան)



«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության», «ԻՆՍՏԻԳԵՅԹ ՄՈՒՄԱՅԼ» ՄՊԸ-ի և «Ինսթիգեյթ ուսումնական կենտրոնի» կողմից համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում յոթամսյա դասընթացներին մասնակցել են հաշմանդամություն ունեցող 15 անձինք, ովքեր ստացել են վեբ ծրագրավորման և անգլերեն լեզվի գիտելիքներ:

Ծրագրի նպատակն է հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական որակավորման բարձրացումն ու ՏՏ ոլորտում աշխատանքի ապահովումը: Ծրագրի շրջանակներում հաշմանդամություն ունեցող տասն անձինք աշխատանքի են տեղավորվել «ԻՆՍՏԻԳԵՅԹ ՄՈՒՄԱՅԼ» ՄՊԸ-ում:

Ավելին, ծրագրի շրջանակներում ստեղծվել է նաև i-gorc.am կայքէջը, որը հնարավորություն է ընձեռում հաշմանդամություն ունեցող անձանց ստանալ առցանց կրթություն և աշխատանքային պատվերներ:

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

(ք. Երևան)

«Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի (ԱՌՆԱՊ) հետ համագործակցությամբ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության երկրորդ մասնաշենքում «LIFE» ծրագրի շրջանակներում ապահովվել է բոլոր հարկերի, աշխատասենյակների, դահլիճների մատչելիությունը, իսկ նոր տեղադրված վերելակն այժմ հնարավորություն է տվել Ճգնաժամերի կառավարման պետական ակադեմիան հասանելի դարձնել նաև անվասայլակից օգտվող անձանց համար:

Աշխատանքների ավարտին, անվասայլակից օգտվող 14 անձինք աշխատանքի են անցել ԱԻՆ համակարգում և ապագայում նրանց թիվը դեռևս կաճի:



Ի գիտություն հետազոտողների, հասարակական և մասնավոր սեկտորի. ՏԵՂԵԿԱԳԻՐԸ հնարավորություն է տալիս լուսարանել հաշմանդամության ունեցող անձանձ ուղղված ծրագրերը/հետազոտությունները: Հետաքրքրվածության դեպքում կարող եք դիմել LIFE ծրագրի օգնական Մարիա Գևորգյանին՝ Maria.Gevorgyan@savethechildren.org էլ. հասցեով:

LIFE ՏԵՂԵԿԱԳԻՐԸ պատրաստվում է ԱՄՆ ՄԶԳ Ֆինանսավորմամբ իրականացվող LIFE ծրագրի շրջանակներում: Տեղեկագրում արտահայտված տեսակետները հեղինակներին են և կարող են չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ-ի կամ «Սեյվ դը չիլդրենի» տեսակետները:



Save the Children

«Սեյվ դը չիլդրենը» երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ամենամեծ կազմակերպություններից է աշխարհում: Այն ներառում է 29 ազգային կազմակերպություններ, որոնք գործում են ավելի քան 120 երկրներում:

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչություն

Հայաստան, Երևան 0014, Ազատության պող. 27, 3-րդ հարկ
Հեռ.՝ (374-10) 20-10-14, 20-10-25, 20-10-29; Ֆաքս՝ (374-10) 20-12-29

Էլ. փոստ՝ Armenia@savethechildren.org

Վեբ կայք՝ www.savethechildren.net; www.life-disability.am



facebook



youtube